ՈՐՈՇՈՒՄ

Դատաապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին

,,10,, դեկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Դ.Ղահրամանյանս, վերանայելով վարույթիս թիվ 57171518 քրեական գործի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

2018թ-ի հունիսի 27-ին, Լաուրա Զաքարի Սարգսյանը ոստիկանության Վաղարշապատի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2017թ-ի սեպտեմբեր ամսին իր Էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի 152 հասցեի տանը որպես պահակ վստահել է Գագիկ Հակոբի Ղազարյանին,, ով օգտվելով այդ հանգամանքից 2017թ-ի սեպտեմբեր ամսից մինչև 2018թ-ի հունիսի 12-ը ընկած ժամանակահատվածում յուրացրել է ,,Օնիքս,, տեսակի դեկորատիվ քարեր, շինարարական տախտակներ, տարբեր տեսակի քարեր և հեռացել, Լաուրա Սարգսյանին պատճառելով՝ 1.630.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 09.07.2018թ-ին ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 57171518 քրեական գործը: Նույն օրը որոշում է կայացվել քրեական գործը ըստ քննչական ենթակայության՝ ՀՀ քննչական կոմիտեի Վաղարշապատի քննչական բաժին ուղարկելու մասին:

22.10.2018թ.-ին քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

28.11.2018թ-ին Գագիկ Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և առաջադրված մեղադրանքում վերջինս իրեն մեղավոր է ճանաչել մասնակի:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ գործով մեղադրյալ Գագիկ Ղազարյանը տուժող Լաուրա Սարգսյանի տանը շինարարական աշխատանքներ կատարելու ընթացքում, 2017թ-ի աշնանը, գործով չպարզված օրը և ամսին, առանց տեղյակ պահելու իր հարազատ եղբայր՝ Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղում բնակվող՝ Անդրանիկ Ղազարյանին պատկանող տան բակ է տեղափոխել Լ.Սարգսյանին պատկանող 22 հատ բազալտ տեսակի քարեր և տրավերդին տեսակի քարերի մնացորդներ: Նշված տրավերդին տեսակի քարերի մնացորդները շարել է 1,80 մետր լայնությամբ և 8 մետր երկարությամբ հատվածի վրա:

Նկատի ունենալով, որ Լաուրա Զաքարի Սարգսյանին պատճառված գույքային վնասի չափերը պարզելու համար անհրաժեշտ են դատական ապրանքագիտության բնագավառի հատուկ գիտելիքներ և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 57171518 քրեական գործով նշանակել դատաապրանքագիտական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ,,Էկսպերտ փորձագիտական կենտրոն,, ՍՊԸ-ի փորձագետներին:
2. Փորձագետի պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Գ.Ղազարյանի կողմից տեղափոխված քարերը պիտանի են նպատակային օգնագործման համար, թե ոչ:

բ/ Գումարային արտահայտությամբ որքա՞ն է կազմում Գ.Ղազարյանի կողմից տեղափոխված քարերի շուկայական արժեքը 2017թ-ի աշնան դրությամբ:

գ/ Որքան է կազմում պատճառված վնասի վերականգնման ծախսերը:

4. Փորձաքննություն կատարելու համար փորձագետին տրամադրել սույն որոշումը ,,2,, թերթ, իսկ գործով մեղադրյալ Գ.Ղազարյանի կողմից տեղափոխված քարերը գտնվում են Արմավիրի մարզի Տարոնիկ գյուղում գտնվող՝ Անդրանիկ Ղազարյանին պատկանող տան բակում:

5. Հանձնարարել ՀՀ ,,Էկսպերտ փորձագիտական կենտրոն,, ՍՊԸ-ի տնօրենին պարզաբանել փորձագետին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-ր հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ **Դ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**